

ուել այս դէպքերից:

Ակադեմիկոս Աճառեանը հեռանում է
իր սիրած ձեռագրերի մօտից եւ ուզում
է նստել իր տեղը. բայց ես՝ աւելի երկար
չխլելու համար նրա այնքան թանկագին
եւ օգտակար ժամերը, հրաժեշտ եմ տալիս
ու հեռանում:
— Բարով երթաք, — ասում է նա
ուղեկցելով մինչեւ աստիճանների մօտ:

ՎԱՍԱԿ ՍԵՊՈՒՆ

Փող կը հընչեն վրէժխնդիր Արեաց դռնէն մարտական
Հրոսակներով, զօրքերով փառք ըստանալ վերըստին.
Կըռուի կու գայ մահահոտ փոթորկածինը Միհրան,
Փիղեր, ձիեր կը հասնին, հետեւակներ ահագին:

Եւէք քաջեր, եւէք Հայեր
Բացէք ձեր սուրն արիւնաբեր:

Կանգառ ժայռերն հընչեցին, արձագանգեց ցեխոտ Կուրն
Հոն, Վըրացի և Աղուան Հայաստանի միացան.
Վհագողւններ արթնցէք, ելիր զայրոյթս բոցաշուր,
Մամիկոնեան ես Վասակ, ես ձեր փառքին գրաւական.
Հեծէք ձիեր բոց բաշերով
Թող կարմըրի սուրն արիւնով:

Ո՞վ են այդ սէգ հեծեալներն Արեաց երկրէն հոս եկած
Գիշերադէմ սեւ ձիեր, և գազաններ գինեհար.
Մատեան զօրքեր սեւագունդ առաջ կու գան տագնապած.
Որքան արագ կը շարժին դէպ ի մահուան ճանապարհ:
Բերէք ձերմակն իմ բոցահեր
Թող կարմըրին մեր սուսերներ:

Եկուր հըպարտ, եկուր ձիս, եկուր թռչող ձերմակ ձի
Դու թըռեղի սարին վրայ նըման արծուի ձագերուն.
Փայլակի պէս դուն եկուր, ահագնութեամբ փոթորկի.
Վայրկեանի մէջ տար զիս հոն, տար սեւագունդ զօրքերուն:
Հեծէք Հայեր հըրեղէն ձի
Ձեր սուրն արեամբ թող կարմըրի:

Ասպաստանիկ իմ տար զիս, կըտրէ անհուն ասպարէզ
Սըմբակներուդ ահա դո՛հ ինկաւ բանակը տապաստ,
Հասիր ահա կ'ընկըրկին ձիաւորներ փըրփրադէզ.
Փիղերն ահա կը պայթին փըքոց ուռոյց առագաստ:
Հայ մանուկներ նըստեցէք ձի
Ի՞նչ գեղեցիկ օր արիւնի:

Փախէք այծեր սասանեան, սատանայի դուք ծընունդ.
Փախէք քաջին Վասակի փայլակներէն երեսի.

Իջնեն պիտի անողորմ ձեր գլխուն լախտ և մըկունդ.
Ինչո՞ւ վախով կը դողաք, այդ ի՞նչ շըփոթ սարսափի:
Ձարկէք, զարկէք Հայ մանուկներ
Սուր խօթեցէք այդ ժանտ կողերն:

Այդ ուր կ'երթաք խառնածայն, այդ ճամբայէն փախուստ չկայ.
Վերջն է այսօր ձեր կեանքի արեգակին թըխաթոյր.
Եւ ինչ մեծ փառք է սակայն՝ որ քաջ մը ձեզ մահ կու տայ,
Եւ այս բոցէ նիզակիս արժանի էք տալ համբոյր:
Ո՞վ Հայ քաջեր բացէք սուրերն
Հալածեցէք ժանտ ըստուերներն:

Գացէք վատեր, գացէք հոն ուր ուրիշներ կանխեցին
Ատըրվշնասպն ու Խոռեան, Վըշնասպը ձեր մարտագող.
Գացէք, գացէք Ումիդդին, արջ Արհմանին, Ջրուանին,
Նիզակն ըսէք Վասակի ճամբու դըրաւ մեզ այսօր:
Օ՞ն Հայ քաջեր, առաջ անցէք
Նիզակներով մահ սըփոթեցէք:

Վահան եղբայրդ իմ սիրելի, ի՞նչ զարմացած կը նայիս
Այս բոցավառ իմ դէմքիս, այս աչքերուս հոգեթով.
Կայծակ մ'երկնի հընոցէն անմահութեամբ վառեց զիս,
Եւ լուսալիւ հոն կ'երթամ ուր մահն է սէր լի փառքով:
Ո՞վ Հայ քաջեր յառաջ երթանք
Ժանտ արիւններ մեր սուրին տանք:

Որո՞ն վըրայ յոյս դըրած այս վատ հսկան ինձ կու գայ.
Ո՞ւմ այս կըրակը լափող, ո՞ւմ խընայեց, ո՞վ անմիտ.
Անտառին մէջ զերդ մայրի ինկաւ և այս կոճղն ահա.
Թող այս նիզակն յաղթական արձանն ըլլայ քու փորիդ:
Սուր տըւէք ինձ, ո՞վ Հայ քաջեր
Հնձենք գըլուխ, բանա՞ք սըրտեր:

Դարձիր Ներսէս, առ նիզակ, հասիր, վազէ, առ նիզակ
Ձիս կը պատեն բեր վատեր, առիւծն անդէն կը պատեն.
Բայց զէնքն հըզօր Վասակին իր հոգին է անխորտակ.
Հասան փառքի վայրկեաններ... Ներսէս զէնքերդ ինձ պէտք չեն...
Ո՞վ Հայ քաջեր Ներսէսին հետ
Ես եմ դարձեալ ձեզ զընդապետ:

Այս իմ կարմիր արիւնովս ապրէ յաւերժ Հայաստան,
Ես անհամբեր վեր թըռայ. Վէրքեր տըւի վերք առի.
Կ'ելլեմ ահա ամպէ ամպ սարսափ ձըգած քաջութեան,
Եւ այդ գացի ես ահա, ես բընակիչ երկընքի:
Հայ մանուկներ վեր նայեցէք
Ինձմէ կորով ձեզ խնդրեցէք:

